




Է Զ Մ Ի Ա Ծ Ի Ն

Դարեր, դարեր հայ հավատին սրլացք ու ձև,
Հո՛ւս Լիր դուն, և կրմնա՛ւ, էջմիածի՛ն,
Բրխում զրվարք՝ հայ հոգիին լույս, լուսանձրեւ,
Հո՛ւս Էիր դուն, և կրմնա՛ւ, էջմիածի՛ն...

էջմիածի՛ն, մա՛յր սիրեցյալ, ահավասի՛կ...
Ահավասիկ որդիդ պանդուխտ՝ հեռուներեն,
Հեռուներեն եկած քեզի, կրնայի՛ր քեզ,
Քեզ կրնայի աղոթալից, էջմիածի՛ն...

Հուզումնահար կրնայի քեզ, էջմիածի՛ն,
Եվ առ խաբխափ կմերձենա ան՝ դեղևուն,
Դեպի դարպասդ, խորա՛նդ դեպի ծիրանեծին...
Զով արցունքներ կկայլակին քարքիչներուն...

Բազմադարյան շեմեդ ներս է անի հիմա՝
Հոգիին հետ իր պապերուն վաղըջական,
Ու պակուցյալ, մեղմի՛վ, մեղմի՛վ ծունկի կուգա՝
Հայացքին տակ իր պապերուն վաղըջական...

Համբու՛յր քարիդ, համբուրելի՛ էջմիածին...

ՀԱՎՈՐ ԱՐԱՄՅԱՆ